



## Մամուլի հաղորդագրություն

Մայիսի 5, 2015թ.

### Հայաստան. Միջազգային քրեական դատարանին միանալով իրականությունը դարձնենք «Այլևս երբե՛ք» կարգախոսը

ՀՀ կառավարությանը կոչ է արվում Սահմանադրական բարեփոխումներն արագացնել՝ Հռոմի կանոնադրությունը վավերացնելու համար:

**Հաազա.** «Հայաստանը կարող է իր հարգանքի տուրքը մատուցել նախկինում կատարված վայրագությունների գոհերի հիշատակին և ապահովել ապագա սերունդների պաշտպանությունը օրենքի գերակայության միջոցով՝ միանալով Միջազգային քրեական դատարանին (ՄՔԴ)», - ասում է «Միջազգային քրեական դատարանի համար» կոալիցիան (Կոալիցիա):

Մայիս ամսին Կոալիցիայի՝ Համընդհանուր արդարադատությանն ուղղված քարոզարշավի կենտրոնում Հայաստանն է: Կոալիցիան կոչ է անում պետություններին վավերացնել Հռոմի կանոնադրությունը, որի հիման վրա ստեղծվել է միակ մշտական հիմունքներով գործող միջազգային դատարանը, որն իրավասու է քրեական արդարադատություն իրականացնել ցեղասպանություն, մարդկության դեմ ուղղված հանցագործություններ և պատերազմական հանցագործություններ կատարած անձանց նկատմամբ:

Նախագահ Սերժ Սարգսյանին այս շաբաթ ուղարկված նամակում կոալիցիան կոչ է անում Հայաստանին անհրաժեշտ քայլեր ձեռնարկել՝ միանալու ՄՔԴ-ի 123 այլ պետություններին և աջակցել վերջ դնելու անպատճելիությանը:

«Հայաստանը, որպես ցեղասպանություն վերապրած ժողովրդի հանգրվան, միջազգային արդարադատության և մասնավորապես Միջազգային քրեական դատարանի լիազորությունների տարածման գործում առաջամարտիկներից պետք է լինի, - ասում է **Քաղաքացիական հասարակության ինստիտուտի նախագահ Արտակ Կիրակոսյանը:** Վաղուց ժամանակն է, որ վերացվեն քաղաքական և իրավական խոչընդոտները Հայաստանի Հանրապետության կողմից Հռոմի կանոնադրության վավերացման համար»:

Չնայած Հայաստանը 1999թ.-ին ստորագրել է Հռոմի կանոնադրությունը, սակայն ՀՀ սահմանադրական դատարանը 2004թ.-ին որոշում է կայացրել, որ այն չի համապատասխանում ՀՀ սահմանադրությանը: 2013թ.-ին Սահմանադրության վերանայման գործընթաց է սկսվել, որը կարող է հնարավորություն ընձեռել համապատասխան փոփոխություններ կատարելու, որոնք թույլ կտան վավերացնել Կանոնադրությունը: Այս տարվա մարտ ամսին ՀՀ նախագահը հաստատել է բարեփոխումների ռազմավարությունը, որը նախատեսում է նման փոփոխություն, սակայն սահմանադրական փոփոխությունների իրական գործընթացը չի սկսվի մինչև 2016թ.-ը:

## CONTACTS

### In The Hague:

Kirsten Meersschaert Duchens  
Head of the Hague Secretariat,  
Regional Coordinator for Europe  
Coalition for the ICC  
Tel: +31 70 311 1087  
[meersschaert@coalitionfortheicc.org](mailto:meersschaert@coalitionfortheicc.org)

### Niall Matthews

Head of Communications  
Coalition for the ICC  
Tel: +31 70 311 1085  
[matthews@coalitionfortheicc.org](mailto:matthews@coalitionfortheicc.org)

### In Yerevan:

Mery Aleksanyan  
Communications Officer  
Civil Society Institute  
Tel: +374 10 57 43 17  
[mery@csi.am](mailto:mery@csi.am)

### In New York:

Jelena Pia-Comella  
Program Director  
Coalition for the ICC  
Tel: +1 (646) 465-8524  
[pia@coalitionfortheicc.org](mailto:pia@coalitionfortheicc.org)



«Միանալով ՄՔԴ-ին՝ Հայաստանը կարող է հարգանքի տուրք մատուցել անցյալ, ներկա և ապագա զոհերին և ապահովել, որ «Այլևս երբե՛ք» կարգախոսը դառնա իրականություն՝ աջակցելով վերջ դնել ցեղասպանության, մարդկության դեմ ուղղված հանցագործությունների և պատերազմական հանցագործությունների համար անպատժելիությանը», - ասում է **Կոալիցիայի՝ Եվրոպական տարածաշրջանի համակարգող Քիրստեն Միերսբերթ Դուխենսը:**

#### **Հավելյալ տեղեկություններ.**

Միջազգային քրեական դատարանն առաջին մշտական հիմունքներով գործող դատարանն է, որը քրեական արդարադատություն է իրականացնում պատերազմական հանցագործությունների, մարդկության դեմ ուղղված հանցագործությունների և ցեղասպանության համար: Դատարանի իրավագործության հիմքում ընկած է լրացման սկզբունքը, որի համաձայն՝ Դատարանն իրավասու է արդարադատություն իրականացնել միայն այն դեպքում, երբ տվյալ պետությունն ի վիճակի չէ կամ չի ցանկանում պատերազմական հանցագործությունների, մարդկության դեմ ուղղված հանցագործությունների և ցեղասպանության առնչությամբ իրականացնել քրեական հետապնդում:

«Միջազգային քրեական դատարանի համար» Կոալիցիան 150 երկրների հասարակական կազմակերպությունների համընդհանուր ցանց է, որը նպատակ է հետապնդում ամրապնդել ՄՔԴ-ի հետ միջազգային համագործակցությունը, ապահովել, որ Դատարանը գործի արդար, արդյունավետ և անկախ, իրականացնի տեսանելի և համընդհանուր արդարադատություն: Կոալիցիան նաև խթանում է ներպետական ավելի խիստ օրենքների առաջընթացումը, որոնք արդարադատություն են ապահովում պատերազմական հանցագործությունների, մարդկության դեմ ուղղված հանցագործությունների և ցեղասպանության զոհերին: Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք այցելել [www.coalitionfortheicc.org](http://www.coalitionfortheicc.org):